

դեղեցիկ եկեղեցիներ կ'անցնին իրենց առջեւէն. կիրթ, յարգալիր ու բարի մարդիկ կը բարեւեն ամէն կողմէն երկու աղնուական ճամբորդներու կողքը: Ապետիքի ու շաղկապէն չեն վրիպիր այլաձեւ տարազները, զոր ինքը չէր տեսած ո՛չ Իտալիա եւ ոչ իր հայրենի երկրին մէջ, ու շատ մը մանրամասնութիւններ՝ զոր օտարական ճամբորդ մը միայն կրնայ ան-

դրադառնալ: Երբ այլեւս կը սկսէր վարժիլ մաքուր, մարդամօտի ու զանգակաւոր աւաններու եւ դիւղերու, ահա՛ աչքին առջեւ կը բարձրանար Վիեննայի Սուրբ Ստեփանոս եկեղեցւոյ վեհաշուք զանգակատունը:

Թրգմ. Հ. Ա. ՖՈԿՈԼԵԱՆ

(Շարունակելի)

ՆՈՐԱԿԵՐՏ ՀԱՅ ԼՈՒՍԻՆԵԱՆՆԵՐ

(Շար. Բազմ. 1953. Թիւ 8-10, էջ 177)

ԳԼՈՒԽ Դ.

Լեւոն Վենետիկի մէջ. Հայոց Կարդիմալ մը կը խնդրէ. Միսիւրիւններու հետ:

13. — Լեւոն Վենետիկի մէջ աւատրիական իշխանութեան ներքեւ գտած հանդիսութեան համարձակութիւն առած, Յուլիոս 30-ին կ'իմացնէ Արքայօր. « Ես գրեցի երէկ Մաքսիմիլիանոս Արքեպիսկոպին (եղբայր կայսեր եւ կուսակալ Վենետիկոյ), խնդրելով իր պաշտպանութիւնը, այսինքն աւատառու (vassal) Աւրատրիոյ» ընել զինքը իբր աղնուական, եւ ոչ սոսկ հպատակ, որ յատուկ էր հասարակ քաղաքացիներուն: Ասոր հետ սկսած էր նաեւ քաղաքական շարժումներ նոյն իշխանութեան եւ Հռոմի հետ եւ Օգոստոս 4-ին կը դառնայ տեղեկագրել Հիւրմիւղեանին. « Եթէ Հռոմի պատասխանը նոյնչափ նպաստաւոր լինի՝ որքան Վենետիկինը, Ես այն ժամանակ պիտի ըսեմ. Կեցե՛ցէ՛ Հայաստան: Տէր Արքեպիսկոպը յետոյ ինծի զրկեց իր թիկնապահը, եւ առանց աւելի ըսելու Ձեզի՝ Դուք անկասկած գիտէք ամէն բան»: Կը յարէ՛ թէ մինչեւ այդ օր բարեկամի մը անցագրով կը մնար.

« զայն իրեն դարձուցի, կ'ըսէ, երէկ իսկ՝ որպէսզի հոս գայ»: Կը բնակէր քաղաքին Սքիալոնեան քարափին վրայ (Թիւ 4179), որ կը նայէր լճակի գեղեցկութեան:

Արքեպիսկոպին հետաքրքրուելէն իր հաւած հետեւանքը չափազանց լաւատես էր. ընդհակառակն Գերալ. Հիւրմիւղեան կը հաղորդէ իր եղբոր. « Աստ խնդրեաց նա ի պետութեան տեղւոյս զպաշտպանութիւն նորա եւ գրել ընդ հպատակս Աւատրիոյ. եւ գրեցաւ խնդրին ի Վիեննա, եւ ասացաւ նմա կալ աներկիւղ եւ անկասկած ի ռուսական հնարից, զի պետութիւնն ոչ անսայցէ բանից նորա, որպէս ի Հռոմ»: Իսկ կարեւորագոյն խնդրին համար կ'ըսէ. « Բայց եւ նպաստել դատի նորա եւ իրաւանց՝ ոչ կարէ եւ ոչ կամի» (9 Օգ.): Կ'իմացնէ դարձեալ՝ թէ նա քաջալերուած Աւատրիոյ ապահովիչ պատասխանէն, կը խորհէր երթալ հաստատուիլ Միլանի մէջ (20 Օգոստոս):

Արքայօրը կը յարէ՝ թէ նա ունէր եւ ցոյց կու տար Վենետիկոյ մէջ « Թուղթ իմն՝ որպէս գրեալ ի Հաղարապետութեանէդ (Հռոմայ) առ Քիչնէֆ հիւպատ Ռուսաց այդր, ցուցանելով զի Կորիկոս իցէ

արդարեւ Թագաժառանգ Ազգին Հայոց, եւ զլացեալ լինի Թոշակն խոստացեալ նմա յապրուստ» (9 Օգոստ.): Անկարելի չէ նման նամակ մը, թէեւ Հիւրմիւղեան չի ուղեր « Գիւրմիւղեան լինել բանից նորա» մինչեւ ստուգէր եղբորմէն, որ կը գոհացնէ զինքը:

14. — Լուսինեանը կ'ունենայ ուրիշ տարօրինակ դադափար մըն ալ: Յուլիոս 31-ին նամակ մը կը գրէ ուղղակի առ Պիոս Թ. Պապը, ուր նախ շնորհակալ կ'ըլլայ իրեն շնորհուած թաթախեալ հաղորդութեան արտօնութեան համար: Մինչեւ հոս լաւ. բայց ի՞նչ կ'ուզէ որ ըսէ յետոյ. « Այսօր Հայ Ազգը կը միանայ Ինձ հետ թաթախեալու Ձեր Սրբութեանէն՝ շնորհել իրեն կարգինալ մը՝ ընտրուած երեք թեկնածուներու մէջէն, զոր Ես պիտի առաջարկեմ, այս գերագնացապէս քրիստոնեայ Ազգին Գլխու հանգամանքով»: Կը յիշէ՝ թէ միացեալ յոյները, մեզմէ նուազագոյն, կարդինալ ունին: « Հայ ազգը, կ'ըսէ, յանձն կ'առնէ բոլոր ծախսերը». եւ անոր բնակավայրը պիտի ըլլայ Հռոմ, « Կարդինալներու ժողովին մասնակցելու համար»: Ապա կը յաւելու. « Իմ Ազգիս, որու գործիքն եմ Ես Ձեր Սրբութեան մօտ, յայտարարելու համար՝ թէ հաւատարմութեամբ կատարած եմ իր բաղձանքը, այս նամակը առաջիկայ Սեպտեմբեր ամսուն պիտի հրատարակեմ բոլոր բեր ամսուն պիտի հրատարակեմ բոլոր լրագիրներուն մէջ, որպէսզի կարենայ հասնիլ մինչեւ անոնց գաւառները. որովհետեւ այդ շրջանին կը խորհիմ Կոստանդնուպոլիս գտնուիլ» եւն.:

Երեք արտառողութիւն կար այս նամակին մէջ. իր անձին տուած վեհապետական հանգամանքը, մինչ տակաւին թական հանգամանք մ'է լոկ. առաջարկութեան դադաճանք մ'է լոկ. առաջարկութեան ի գործ դրած ստիպումը՝ հրատարակութեան խոստումով: Բոլորովին ինքնազը-

լուխ առած էր այդ քայլը, եւ նամակին պատճէնն ալ յղած էր Հիւրմիւղեան Արքայօր, որ այսպէս կը գրէ իր եղբոր. « Ընդ որ ոչ սակաւ դժկամակեցայ. զի որպէս գլուխ եւ երեսփոխան Ազգին՝ երաշխաւորէ ի հատուցումն ծախուց ծիրանաւորին ազգայնոյ, զոր խնդրէ. եւ չգիտեմ թէ ուստի՛ ապա հատուցէ, բայց ի մեր վերայ արկանել: Յուսամ զի խնդիր նորա ոչ լիցի լսելի»: Այդ մասին հարցում եղած էր Ծաւալոցէն առ Գերալ. Եղբարդ Արքեպիսկոպոս, եւ « հարազատութիւնդ բարեօք պատասխանեալ էր», կ'ըսէ եղբայրը (20 Օգոստ.): Բայց այդ խնդիրը պիտի շարունակուէր տակաւին:

15. — Լեւոնի հաղորդակցութիւնը Միսիւրիւնեաններու հետ սերտ չէր, եւ ամէն ինչ իր ուղեղով կը գործէր: Բնական է, անոնք չէին կրնար անշուշտ հաւանիլ ու գործակցիլ իր բոլոր բաղձանքներուն, զոր տարբեր զոյններով կը տեսնէին իրենք: Վենետիկոյ մէջ նստած, գալէն ի վեր « մի անգամ երեւեալ նորա առ մեզ ի վանս, եւ ապա աներեւոյթ եղեւ, կ'ըսէ Արքայօր, մինչ չգիտել մեզ եւ զտեղին՝ զոր ծածկէր եւ ի մէջն» (20 Օգոստ.): Եւ կը խորհրդածէ. « Այր խարդախ թուի եւ նենգաւոր, յանդուգն եւ ձեռներէց, կամ թէ արդարացուցանել զնա կամիցիմք՝ փաթած» (27 Օգոստ.): Մարդիկ սովոր են դատել միշտ արտաքին երեւոյթէն, չկարենալով տեսնել ներքինը. եւ Լեւոնի արտաքինը անշուշտ այնչափ նպաստաւոր չէր իրեն: Հիւրմիւղեանը կը գրէ դարձեալ. « Ի Կորիկոսէ կատկածիմ զամենայն, զի ոչ վարկ բարի առի զնմանէ » (4 Սեպտ.): Յայտնի է թէ անոր գործելու եղանակը դիտողներ կային քաղաքին մէջ, նոյնիսկ օտարներ (ինչպէս Փարմայի Դիսուհի պարագային. հմ. 16), եւ կը տեղեկացընէին Միսիւրիւնեաններու խոհեմ եւ ազդա-

սէր Առաջնորդին, որքան եւ ծածկել ջանար ան:

Հանդերձ իր վերապահութեամբ՝ միանգամայն կ'աշխատէր նա շահագործել Մը-խիթարեան աշխարհածանօթ անունը: Թորինոյի մէջ զետեղած իր ծագման վաւերագրին, զոր տեսանք վերեւ (Հմ. 9), պաշտօնական մէկ օրինակը պատրաստել կու տայ նոյն քաղաքին մէջ, զոր կ'ընդունի Վենետիկի մէջ. Յուլիս 22-ին անոր վրայ կը յաւելու յանձնումը Միխիթարեան Ուխտին, եւ կ'աւարտէ. «Ի հաւաստիս որոյ՝ Մեք զնեմք անդր զՄեր կնիք Արքայական», կնքամոմով դրոշմուած: Ս. Ղազար ատով պիտի համոզուէր նախ ինք, եւ համոզէր օտարներն ալ՝ թէ յանձին Լեւոնի ունէր ստուգել իր արքայակազմ իշխանը եւ Հայոց թագին ժառանգը: Այդ վկայագիրը ցարդ կը պահուի դիւանի մէջ: Որովհետեւ կնիքն յիշեցինք, կը կազմուի զոյգ թագերէ իրարու վրայ, նշանակելով իր թագաւորական ծագումը հօր ու մօր կողմէ միանգամայն: Ստորեւ կայ վահան մը, ներսը երեք առիւծներով եւ երկու խաչերով: Նամակին գլխադրոշմը մէկ թագով է եւ երկու ձուածեւ վահաններու վրայ դրուած L ~ A, որ է «Լեւոն Հայաստանի»: Երկրորդ գլխադրոշմ մ'ալ ունէր, թագի մը ներքեւ դրուած. «Իշխանի Հայոց Սեմեակ Ներքին» (Տե՛ս Բազմ. 1953, թ. 1-3, էջ 42 եւ 49): Ներքին սենեակը կար, եւ անոր պաշտօնեան ինքնէր տակաւին: Իսկ արտաքինը պիտի բացուէր, երբ բազմէր Հայաստանի գահուն վրայ: Ուրիշ բան չէր պակսեր՝ բայց եթէ սրբադրութիւն մը թագի ձեւին, եւրոպական բոլորակութենէն վերածելով Լուսինեան պսակաձեւին. եւ զոր պիտի կատարէր անշուշտ դիտութիւնը, եթէ երբեք այդ թագը անջատուէր թուղթէն ու մօտենար իր գլուխին:

Գառնալով Միխիթարեաններուն, Բրուսիոյ դէմ բողոքագրին մէջ (Հմ. 8) խառ-

նեց նախ զանոնք հետեւեալ պարբերութեամբ. «Այսպէս Հայաստանի Ժողովուրդն հաստատապէս վստահ է՝ թէ պիտի ուզուի, նախ քան անլուր ծայրայեղութեան հասնիլը՝ բնական օրէնքի եւ միջազգային իրաւունքներու բռնարարման պատճառով, դիմել թէ՛ առ Գեր. Արքեպիսկոպոսն Շիրակայ (ծնթ. խոստովանահայր Լեւոն իշխանի), փոխանորդ Հայ Ազգին՝ Հռոմի Ս. Գահուն մօտ, եւ թէ՛ առ Գեր. Արքեպիսկոպոսն Սիւնեաց, Ընդհանուր Արքայ Միխիթարեան Միաբանութեան՝ Վենետիկի Ս. Ղազարու հայ մեհաստանին մէջ», եւ կը յիշեցնէ իր ծննդազրին գոյութիւնը նոյն վանքին մէջ(1): Նոյնպէս Աղձնեաց արքեպիսկոպոսը իր բողոքագրին մէջ (Հմ. 8) կ'ըսէր Բրուսիոյ նախարարին. «Կը խնդրենք ձեզմէ մեր բողոքագրին պատասխանը տալ առ Գերպ. Արքեպիսկոպոսն Շիրակայ, հոգեւոր փոխանորդ Հայ Ազգին Ս. Աթոռին քով»(2): Տեսանք ասոր ձեռքէն չորթած բողոքագիրն ալ (Հմ. 10):

Այդ չէր բաւեր, Լեւոն իր մնայուն հասցէն ալ նշանակած էր Ս. Ղազար: Այդ պատճառով Մաքս. Արքեպիսկոպոսն թիկնապահն ալ (Հմ. 13) հոն կ'երթայ տեսնելու զինք, կը զարմանայ որ՝ չկայ, եւ տեղն անդամ անյայտ է միաբաններուն: Այդ ամէն հնարագիտութեան նպատակն ու հետեւանքն ուրիշ բան չէր՝ բայց եթէ Միխիթարայ տունը, այդ հայկական մեծարուկեղոնը, իր քաղաքական գործունէութեան կեդրոնն ու գործակից ցուցնել աշխարհի, եւ ասով՝ մեծադոյն կարեւորութիւն մը տալ գործին: Բայց Միաբանութիւնն ունէր իր առաքելութիւններն ու բարոյական շահերը՝ Թուրքիոյ, Ռուսիոյ, Գաղղիոյ մէջ եւ ուրիշ կողմեր, զորս չէր կրնար զոհել կամ վտանգել երիտասարդի մը ցնորքներուն համար: Ազդարարութիւն

(1) Յուլ. 20, (2) Անդ. 21.

կ'ըլլայ իրեն որ փոխէ հասցէն. բայց նա կը դառնայ պնդել՝ որ հոն մնայ (26 Յունուար, 1859), եւ անփոփոխ կը պահէ՝ առանց հաւանութեան Ուխտին:

Միաբանութիւնը՝ որ կը տեսնէր այդ ամէնը, որ անոր արքայազարմութեան չէր հաւատար, եւ քաղաքական կայքերուն մէջ վնաս միայն կը տեսնէր իր տան եւ ուրիշներու, բնական էր որ սրտնեղութեամբ եւ տեսակ մ'արհամարհանքով նայէր անոր: Եւ ինք կը նկատէ ատիկա ու կը դժկամակի: «Ես՝ աղքատ թէ հարուստ, կը դրէ Արքահօր, Ձեր միաբանները պէտք է որ յարգեն զիս»: Կը զանգատի որ անոնք ու վարժարանին աշակերտներն իրեն հանդիպելուն՝ չեն ողջունէր զինքը. Հ. Արքահամ ծարեան զինք պարզապէս Պարոն կը կոչէր: Լեւոն կը սպառնայ որ եթէ անգամ մ'ալ նոյն վարմունքը տեսնէ, պիտի հարցնէ. «Ո՞ր ախոբէն ելած է՝ որ չի ճանչնար թէ Ես իր օրինաւոր իշխանն եմ, մէկ խօսքով՝ իր Վեհապետը» (26 Յնր.): Այս անհիմն համոզումը, որ այնքան յամուրթեամբ տողորուած էր իր մտքին մէջ, կրնար նաեւ անկեղծ ըլլալ, ինչպէս ըսինք (Հմ. 3). բայց չէր ստիպեր որ ուրիշներ ալ հաւատային:

16. — Ընթացիկ բազմավորում տարին (1858) չփակուած, Լեւոն ուղեց նոր փորձ մըն ալ ընել Ռուսիայէն իր պահանջին: Հոկտեմբեր 31 թուականով աղերսագիր մը յղեց Աղեքսանդր Բ. կայսեր, «ըստ թելադրութեան Ն. Կ. Վ.»(3), որ յայտնի է թէ ուրիշ եկած էր: Կը յիշեցնէ նախ առ անոր հայրը դրած նամակը, կասկածելով նամակին անոր ձեռքն հասնելուն վրայ. ապա թէ ոչ, զինք պիտի չթողուր «այս դժուարին կացութեան մէջ»: Նոր կայսեր թագադրութեան առիթով ալ, կ'ըսէ, խնդրագիր մը ներկայացուցեր է:

(3) Անդ. 15, (4) Անդ. 8, (5) Անդ. 9.

Ու ներկայիս կ'ընէր «վերջին կոչ մը, զնեղով անոր գահոյքին ոտքը յարակից յուշարարը... Եթէ Ձ. Վ. երկարէ ինծի մտերմական ձեռք մը, երջանիկ պիտի ըլլամ մոռնալու ինչ որ անցեալը կրնայ ունենալ վիրաւորիչ ինծի համար: Այն ատեն, Տէր, այն ատեն միայն պիտի հաւանիմ առնել իմ ընտանեկան անունս, որ է իշխան Լուսինեան, եւ վերստանալ ոչ գործօն զնդապետի աստիճանս կայսերական ձիաւոր պահակներուն. չնորհ՝ զոր երբեմն տուաւ ինձ Նիկողայոս կայսրը: Ես շատ դժբախտ չեմ, Տէր, կորսնցնելով երկիրս, գահընկէց ըլլալով իմ սերունդիս հետ, աւա՛ղ»: Եւ կը բողոքէ որ Ռուսիա՝ յետ բարոյական մահուան, նիւթական ապրուստն ալ կը զլանայ իրեն, եւ ոռւս գործակալներ կ'աշխատին խորտակել իր պատիւն ալ(4):

Հոս վը գիջանի իրմէ պահանջուած տիտղոսի փոփոխութեան, որուն կ'ակնարկէր Գերպ. Եդ. Հիւրմիւղեան տարւոյս Փետր. 28-ի նշածին մէջ (Հմ. 11): Իսկ նշանակուած «յարակից յուշարարը» կը բովանդակէր նախաբանութիւն մը եւ պատճէնները Պետրբուրգի Կառավարչի նամակին, առ Նիկողայոս Ա. առաջին խնդրագրին, Գերպ. Եդ. Հիւրմիւղեանի ծանօթ յուշագրին, առ Աղեքսանդր կայսերուն հին գրածին եւ Աղձնեաց Արքեպիսկոպոսի բողոքին (Հմ. 8): Խնդրագիր մ'ալ զրկած էր Կոստանդին մեծ դուքսին:

Դեկտ. 22ին Վենետիկի ոռւսական հիւպատոսը այդ բոլորը կը վերադարձնէր Լեւոնի, յայտարարելով թէ «այդպիսի խնդրանքներ երբեք պիտի չընդունուին», եւ նոյն ծրարին համար եղած թղթատարական 3,12 Փիոբին ծախսն ալ կը պահանջէր(5), որպէսզի Ռուսիա չանակաւորար կայսր վնասէ: Կայսեր ուղղուած թղթ-թածրարին մէկ տպագիր օրինակը կը պահուի Ս. Ղազարու դիւանին մէջ:

Սակայն Լուսինեան ողորիւ կ'ուզէ տա-

կաւին: « Իբրեւ արեանառու իշխան եւ կաթողիկէ՝ կը խորհի միջնորդութիւնը հայցել Գաղղիոյ կայսեր, « Պաշտպանին կաթողիկէ կրօնից», եւ իր Յարին ուղղած յուշագիրը կ'առաքէ Փարիզի Արքեպս. Կարդ. Մոռլոտի, խնդրելով որ իրեն թարգմանն ըլլայ: Եւ նա, յետ դիմելու ուր հարկաւոր էր, կը պատասխանէ. «Կայսրը այնքան ծանրաբեռնուած է ամէն տեսակ հոգերով, որ կ'իմացուի թէ դժուարին է իրեն յանձն առնել ատիկա»(6): Շատ ընական էր՝ որ թոշակի մը համար միջնորդութիւնը կայսեր հաճելի գործ մը չըլլար:

Մեր իշխանը, երկու անգամ կողոպտուած՝ Ռուսաստանէն եւ Բրուսիայէն վերադարձելու պահուն, եւ իր բողոքներուն մէջ միշտ դանդաղորդ իր անձուկ կացութեան մասին, ի՞նչպէս վ'ապրէր, կը ճամբորդէր ու կը տպագրէր անգամ: Պարզինք համառօտիւ: Տարւոյս սկիզբները խօսելով Գերպ. Եղ. Արք. Զիւրմիւղեանի հետ, կը յայտարարէր՝ թէ «առձեռն արծաթն իմ սպասի, եւ չմնայ ինձ այլ ինչ՝ բաց յերկերիւր հազար Փրանքաց, զորս ի սեղանն Անգղիական դետեղեալ եմ, եւ ութ հազար Փրանքս եւեթ ի տարւոյն պողաբերեն ինձ» (28 Փետր.): Կ'երեւի՝ թէ այդ գումարն Անգղիոյ մէջ կատարուած ազգային հանգանակութեան արդիւնքն էր, զոր յիշեցինք (հմ. 7): Յունիսի 30-ին դարձեալ կը գրէ նոյն Արքեպիսկոպոսին, հաստատելով նոյնը. «Դուք մուրացիկ մը չէք յանձնարարեր (Փլորենտիոյ իշխանութեան), այլ մարդ մը՝ որ տարեկան 10,000 Փր. եկամուտ ունի: Թէպէտ աքսորական իշխան մ'եմ, ունիմ դեռ ինչ որ պէտք է լաւ ապրելու համար Իտալիոյ մէջ»: Ոչ այդչափ միայն, այլ թոշակաւոր գործակիցներ ալ ունէր. « Եղնկայի

իշխանն եւ Աղա Պէյ բողոքական դարձեր են, կ'ըսէ. ի՞նչ սոսկում: Չեմ կարող իսկոյն կտրել իրենց թոշակը. բայց աւելի ուշ պիտի կատարուի ատիկա»: Ակնկալութիւն ունէր նաեւ Վրաստանի իշխանէն՝ որ իր մօրեղբորորդին էր, եթէ կարելի ըլլար առաքման անուղղակի ճանապարհ մը գտնել՝ Թոսքանայի նախարարին ձեռքով:

Ամէն պարագայի, շատ խնայողութեամբ կրնար ապրիլ այդ դրամով: Միւս կողմէ դուռը էր փոխ կամ ողորմութիւն առնելու մէջ, կը գրէ նոյն Զիւրմիւղեանը. եւ երբ Հոռոմ գտնուած ժամանակ՝ Անթոնի Ծիրանաւորն անոր երթը փութացնելու համար՝ «մատոյց նմա գումար ինչ ի ձեռն իմ, տալ նմա իբրեւ յինչն ձեր կամ փոխ, անհնար եղեւ ինձ, կ'ըսէ, հաւանցուցանել զնա» (24 Օգոստ.): Եւ ի լուր Փլորենտիոյ մէջ ելած սուտ համարին՝ թէ Հոռոմի պետութենէն նպատակ ընդունած էր (հմ. 10), նամակով կը խնդրէ Կարդ. Անթոնիէն հերքել այդ լուրը՝ գրելով մայրաքաղաքի նուիրակին: Կը յարէ թէ «Այս նոր սուտն անկասկած ելած է ուսական դեսպանէն», որ տեսնելով իր յաջողութիւնը, «ուզեց վնասել ամէնէն սրբազան բանին՝ իմ պատուոյս» եւն. (7 Յունիս): Նման սուտեր կը չըջնին նաեւ յանուն Եւրոպայի վեհապետներուն եւ Անգղիոյ անգամ(7):

Բնական էր որ քաղաքական նպատակներու դիմող իշխանի մը համար անպատեհ ըլլար աղքատ կամ կարօտեալ երեւիլ: Սակայն երբ եկաւ երեւցաւ Վենետիկոյ մէջ, եւ գրպանն սկսաւ աւելի թեթեւալ, ստիպուեցաւ ինքն իսկ ձեռք կարկառել զաղտնապէս այնպիսի անձերու, որոնց հետ քաղաքական հաղորդակցութենէ հեռի էր:

Հ. ՎԱՐԴԱՆ ՀԱՅՈՒՆԻ

(Շարունակելի)

ՄԵՐ ՆԱԽՆԵԱՑ ՀԱՒԱՏՔԸ

Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ ԵՒ ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼ

Քանի մը տարի առաջ երկար բանավէճ մը տեղի ունեցաւ «Հասկ» եւ «Աւետիք» ամսաթերթերուն միջեւ՝ Պետրոս Առաքեալի դիւանորդութեան մասին. փոխանակուեցան հակընդդէմ կարծիքներ՝ իբրեւ մեկնութիւն աւետարանական պատմութեան (Մտթ. ԺԶ. 18), որպէս լուսաբանութիւն Ս. Հայրերու կարգ մը խօսքերուն, կամ իբրեւ բացատրութիւն այն շարականներուն՝ ուր այս հարցին վերաբերող բացայայտ կամ քողարկեալ ակնարկներ ու վկայութիւններ կան(1):

Վերջերս դարձեալ նոյն նիւթին մօտե-

ցաւ Գերշ. Ն. Եպս. Ծովական, եւ հարցը մանրամասնելով՝ ներկայացուց հակիրճ ուսումնասիրութիւն մը Ս. Ներսէս Շնորհալիի վարդապետութեան մասին(2): Իր առաջին տողերով իսկ Գերշ. Հեղինակը կ'ըսէր. «Ս. Պետրոս Առաքեալի պաշտօնին մասին ոմանք(3) ինքնահնար եւ հակաւետարանական դադափարներ կը սրնուցանեն, եւ առ այդ կը ջանան շահագործել Ս. Ներսէս Շնորհալիի անունը, մէջբերելով իր սա տողերը. «Եւ դու Հրոռմ մայր փաղափաց» եւն...»(4): Եւ յետ յիշեալ ծանօթ հատուածը ամբողջու-

(1) Ամէնէն առաջ լոյս տեսաւ «Բացատրութիւն եւ վերլուծում քանի մը շարականներու» խորագրով յօդուած մը ՔՆՆԱՍԷՐ ստորագրութեամբ. ՀԱՍԿ ՀԱՅԱՊԻՏԱԿԱՆ ՏԱՐԵԳԻՐԻ, Ա. տարի [1948], էջ 89-103 (տպ. Կթղ. Կիլիկիոյ, Անթիւիս): Նոյնի իբր յաւելումով՝ տե'ս Հասկ ամսաթերթ, ԺԷ. [1948], Թ. 6-7, էջ 162-164:

Իսկոյն լոյս տեսան քննադատական զոյգ յօդուածներ 10) «Պատասխան Քննադատի յաւելումաւ» խորագրով, զրուած Յովհ. Վրդ. Փարթաւեանի կողմէ. Աւետիք, ԺԷ. [1948], Թ. 7-8, էջ 127-130: 20) «Պատասխան առ Քննադատի կաթողիկէ բառին բացատրութեան առիթով». Անդ, էջ 131-134:

Այնուհետեւ Յովհ. Վրդ. Փարթաւեան հրատարակեց յօդուածաւոր մը «Ի բերանոյ քուսմէ դատեցայց գեղեցիկ խորագրով. Աւետիք, ԺԷ. [1948], Թ. 9-10, էջ 159-163. Թ. 11-12, էջ 185-187: ԺԸ. [1949], Թ. 1-2, էջ 226-229:

Քննադատ խմբագրեց իր «Պատասխան Շարականներու Բացատրութեան քննադատներուն» յօդուածաւորը. Հասկ, ԺԷ. [1948], Թ. 11, էջ 289-293: ԺԸ. [1949], Թ. 1, էջ 11-16. Թ. 4, էջ 109-112:

Այս յօդուածներուն պատասխանեց Յ. Մ. ստորագրութեամբ մէկը «Անշարժի վէմը» զրուածութեամբ. Աւետիք, ԺԸ. [1949], Թ. 7-8, էջ 325-329: ԺԹ. [1950], Թ. 1, էջ 26-29:

Նոյն նիւթին շուրջ տե'ս նաեւ Մասիս շարաթերթի մէջ, Գ. տարի [1949], Թ. 15 [120], էջ 6-7, «Որո՞նք են Հայ եկեղեցւոյ հարազատ ներկայացուցիչները»:

Հուսկ հրատարակուեցաւ Վսեմ. Կարդ. Գրիգոր Պետրոս ԺԵ. Աղաճանեանի 1949-ի «Թուղթ հովուական», որմէ հատուածներ տե'ս՝ Մասիս Գ. [1949], Թ. 13 [118], էջ 7 եւ յաջորդ թիւերուն մէջ:

Բանավէճը աւելի պաշտօնական հանգամանք առաւ՝ երբ Վսեմ. Կարդ. Աղաճանեանի հինգերորդ հովուական թուղթին առիթով (Աւետիք, ԺԹ. [1950], Թ. 7-8, էջ 105-124), Գերշ. Դերենիկ Եպս. փոխտեան հրատարակեց «Թուղթ հերքման» մը (տպ. Անթիւիս, 1951), որուն ջանքախիչ կերպով պատասխանեց Պետրոս Պարենտեան «Թուղթ հերքման» քէ եղծումն ուղարկութեան» զրբով (տպ. Պէյրուս, 1951): Աւելի ուշ, Օրմանեանի «Հայոց եկեղեցին» զրբին Ե. տիպին առիթով (Անթիւիս, 1952), լոյս տեսաւ անոր հերքողական ալ, «Օրմանեան - հին զրբին լուսով» նոր տիպին առիթով (Պէյրուս, 1952):

(2) Ս. Ներսէս Շնորհալի Ս. Պետրոս Առաքեալի մասին: Հասկ, ԻԱ. [1952], Թ. 10-12, էջ 490-491:

(3) Կակնարկէ կաթողիկէ հեղինակներուն:

(4) Ողբ եղեւեայ, տպ. Փարիզ, 1827, էջ 3:

(6) Անդ, 16. (7) Անդ, 19.